Կարգապահական գործ թիվ ԿԳ-15043

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 195-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/114-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՆԱՌԱ ԿԱԿՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Կարեն Մեժլումյանի,

Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

Քննության առնելով փաստաբան Նառա Կակոյանին (արտոնագիր թիվ 449) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 01.06.2015թ. . տրամադրված տեղեկանքի փաստաբան Նառա Կակոյանը ունի 100. 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2013թ. սեպտեմբերից մինչև 2015թ. ապրիլ (ներառյալ) ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

01.06.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 128-Ա/ԿԳ-15043 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Նառա Կակոյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

02.06.2015թ-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի սեպտեմբերի28-ին, ժամը՝ 19:32-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. **<u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>**

Փաստաբան Նառա Կակոյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի

տվել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Նառա Կակոյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 24.06.2005թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Նառա Կակոյանը ունի 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2013թ.սեպտեմբերից մինչև 2015թ. ապրիլը (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Նառա Կակոյանը իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 28.09.2015թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Նառա Կակոյանի նկատմամբ (արտոնագիր 449, ստացված՝24.06.2005թ.) 2006-2015թթ. ընկած ժամանակահատվածում կայացվել են կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետևյալ որոշումները

- 09.11.2010թ թիվ 30/5 որոշմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողություն, տույժը մարվել է:
- 09.08.2011թ թիվ 16/3 որոշմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ խիստ նկատողություն, տույժը մարվել է:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Նառա Կակոյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Նառա Կակոյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ. տրամադրված տեղեկանքով: Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ չմարված կարգապահական տույժեր չունի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Նառա Կակոյանին (արտոնագիր թիվ 449) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:***
2. ***Փաստաբան Նառա Կակոյանի (արտոնագիր թիվ 449) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:***
3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Նառա Կակոյանին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
Խորհրդի նիստը նախագահող՝ **Լիպարիտ Սիմոնյան**